վասն զի յամենայն քաղաքս թուղթ առաքեցան յաթոռակալացս և ի վարդապետացս վասն ոչ ընդունելոյ զնա, եւ այժմ գայ առեն։

Կիրակի օրս (8 Յունիս) գնացաք ի մեր ժամն եւ անտի ի Մղտեսոնցն և զՄղտեսի Խանումն ի տեղն բերաք, վասն զի զկինն եւ զորդիսն բերեալ էր ի տեղս ի սահմանաց և ի բնակութենէ իւրեանց, որ կոչի Ակիձոր, և վասն նեղութեան և հարկապահանջութեան տեղեացն, և ևս ի ժամանակիս եղեալ վիշտն՝ ի Սէյտի Ահմէտէն եղեալ անբաւ։ Վասն այսորիկ բազումք ելեալ ի տանց եւ ի բնակութենց, թողեալ զայգի եւ զարտ, զհնձան եւ զկալ եւ զայլ ամենայն վայելչութիւն պարտէզից եւ բուրաստանից, զեղնիցն եւ զոչխարիցն, և եկեալ բնակեցան ստ ի քաղաքս որ կոչիւր Կոստանդնուպոլիս։ Եւ զհացն անդ կերեալ եկն մեր Մինասն և առեալ տարաւ զմեզ ընդ ինքեանս ի սէյիր, որ էր Հաճի Աբտուլան, Մղտեսի Պօղոսն, եւ այլ ի մերայնոց մեր եկեղեցւոյն Զ Է ոգի գնացեալ նստաք ի Ղուզղունճուխն և երեկոյիս եկաք ի տուն։

Բշի (9 Յունիս) առաւօտուս նստեալ ընդ նոսա ի Մղտեսոնցն և ապա ելեալ գնացի ի խանութ։ Եւ յետ կէս աւուրս եկն Սէյտի Ահմէտ փաշան սակաւ արամբք՝ վստահացեալ յերդմունս թագաւորին թէ Ե՛կ և ես ոչինչ առնեմ, և մտեալ ի թագաւորն, ել գնաց ի տուն իւր։ Եւ երեկոյիս գնացեալ ի տուն եւ նստաք անդ և ելեալ պառկեցաք և հաւն խօսեցաւ։ Աւուրքս սըբայ զօլին խիստ կու նեղացնէր զամենեսեան, որ ունէին սակաւ ինչ նորագոյն հանդերձ, և ոչ միայն զՀայս այլ և զՏաճիկս։

Ի գիշերիս և առաւօտիս Գշի (10 Յունիս) անձրև եկաւ։ Եւ օրս ելեալ գնացին Խանումենք ի տունս իւրեանց և երեկոյիս մեք անդ կացաք։ Եւ օրս գայլն ի յՈւսկիւտարու արք և զօրք Սէյտի Ահմէտին։